ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 11—12 *Общественные науки*

Դ. Ֆեր-Դերիգորյան

ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՀԱՅ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

Ստալինգրադի հոչակավոր ճակատամարտն ամենայն իրավամբ համարվում է պատերազմների պատմությանը մինչև այժմ անծանոթ, իր խարի մասշտաբով և դաժանությամբ անդերազանցելի մի էպոպեա։ Ռուսական մայր դետի անառիկ ամրոցը պատմության մեջ երկրորդ անգամ նշանակալից տափով փրկեց Սովետական Հայրենիքն օրհասական վիճակից։ 1918—1919 թ. թ. կարմիր Ցարիցինը, ընկեր Ստալինի գլխավորությամբ, կրծքով պաշտպանեց երիտասարդ Սովետական պետությունը գերմանական վարձկանների արշավանքից։ Պատմությունը կրկնվեց 24 տարի անց, միայն առավել բարդ ու բացառիկ լարված ռազմա-ստրատեգիական պայմաններում։ 1942 թ. այդ հերոս-քաղաքը, հանճարեղ զորավար Մեծ Ստալինի գլխավորությամբ, վիթխարի ժայռի պես ծառացավ տեսոնական ուժեղ սպառազինված հորդաների դեմ-հանդիման՝ պաշտպանելով Սովետական հզոր տերության պատիվ ու արդար իրավունքները։

Գերմանական գլխավոր շտաբի սարաստեղիական պլաններում Ստալինգրադի ուղղությունը բացառիկ կարևոր և առանձնահատուկ նշանակություն ուներ։

1941 թ. դեկտեմբերին, Մոսկվայի մատույցներում սոսկալի պարտություն կրելով, գերմանական հրամանատարությունը 1942 թ. սկզբին փորձեց անցնել Մոսկվայի թիկունքն ամենակարճ ճանապարհով՝ Վորոնեժի ուղղությամբ։ Հակառակորդի հանդուգն պլանը ժամանակին գուշակվեց Սովետական Հրամանատարության կողմից և նույնպես ձախողվեց՝ ռազմական գործողությունների դեռևս սկզբնական շրջանում։

Այն ժամանակ Հիտլերի զորականն ընդունեց երրորդ, առավել վտանգավոր որոշումը գլխավոր հարվածն ուղղել դեպի Ստալինգրադ, հույս ունենալով ճեղքել մեր ռազմաճակատը, կտրել Սովետական Միության և Կարմիր Բանակի կոմունիկացիաները Վոլգայի և Ուրալի թիկունքից, առա գարգացնելով հարձակումը՝ թևանցել Մոսկվան արևելքից։ Միաժամանակ հակառակորդը հուսադրվել էր Ստալինգրադի շրջանում սովետական զորքերին հարված հասցնելով թուլացնել Կովկասյան ռազմաճակատը և ներխուժել Իրաքի ու Իրանի նավթառատ շրջանները։

Այդ նպատակով գերմանական հրամանատարությունը Դոնի մեծ ոլորանում առանկային և ժոռո-հետևակային խոշոր ուժեր կենտրոնացնելով, 1942 թ. ամառը Ստալինգրադի ուղղությամբ անցավ վճռական հարձակման։ Օգոստոսի կեսերին գերմանա-ֆաշիստական բանակները լայն ճակատով անցան Դոնը, իսկ սեպտեմբերին նրանց հաջողվեց առանձին հատվածներում ընդհուպ ժոռենալ Վոլգային։

Սկսվեց Ստալինգրադի անօրինակ, հերոսական պաշտպանությունը,

ոչը խոշորագույն դեր կատարեց Հայրենական Մեծ պատերազմի, ինչպես նաև համաշխարհային երկրորդ պատերազմի հետագա ընթացքում։

Զոփազանց ծանր էր քաղաքի պաշտպանների կացությունը Ստալինգրադյան ճակատամարտի առաջին՝ պաշտպանողական էտապում։ Օգտվելով Եվրոպայում երկրորդ ճակատի բացակայությունից, հակառակորդին հաջողվել էր ուժերի մեծ գերակշռություն ստեղծել այստեղ։ Ընդելով անպայմանորեն նվաճել Ստալինգրադը, պատահական չէր, որ գերմանական հրամանատարությունը քաղաքի վրա նետել էր իր ամենազորեղ և մոլի ֆաշիստական խմբավորումներից մեկը՝ գեներալ-ֆելդմարշալ ֆոն-Պաուլյուսի 6-րդ բանակը և 4-րդ տանկային բանակը։ «15 հետևակային, 4 տանկային և 3 մոտոհետևակային դիվիզիաներ պաշարել էին քաղաքը։ 2000-ից ավելի հրանոթ ու ականանետ ռմբակոծում էին Ստալինգրադը, 600—2500 ինքնաթիռ օր ու գիշեր անդադրում գրոհում էին հերոս-քաղաքը»։[1]

Սակայն Քշնամու ռազմական մեքենայի վայրագ շառաչը չսասանեց ռազմի արհավիրքում կոփված, հայրենասեր ու տոկուն ռուս մեծ ժողովրդին։ Լայնատարած երկրի բոլոր ծայրերից Վոլգայի անառիկ ամրոցն էին եկել բազմազգ Սովետական Միության քաջարի զավակները՝ ամանակցելու այն մեծ ճակատամարտին, որը «գերմանա-ֆաշիստական բանակի մայրամուտը հանդիսացավ» (Ի. Ստալին)։

Ստալինի քաղաքի կենաց համար հյուսված էպոպեում հիշատակարժան դեր են կատարել նաև հայ ռազմիկները՝ Դոնի և Վոլգայի հրավառված ափերին գերմանական իմպերիալիստներից պաշտպանելով իրենց հարազատ Հայաստանը, հինավուրց Կովկասը, ողջ Սովետական երկիրը։

* * *

Մոսկվայում, Կարմիր Բանակի կենտրոնական Թանգարանի Ստալինգրադի պաշտպանությանը նվիրված դահլիճներից մեկում, ամենայն օր հազարավոր մոսկվացիներ, այցելելով Թանգարանը, խորին հարգանքով կանգնում են մի ապակյա քառակուսի արկղիկի առջև, ուր դրված են Քընդանոթի արկի բեկորներ, կարմիրբանակայինի բլուզի կտորտանքներ և Համ. Կ(ր)Պ. անդամության Պեկնաձուի մի բզկտված քարտ, որի վրա հազիվ նշմարվում են Հայաստանի կոմունիստ. . . . . պարտ. . . . . բառերը։ Արյունաշաղախ կտորների տակ գրված է հետևյալ մակագրությունը։

«Արտաշես Ալեքսանդրի Գոմորյանի պայծառ հիշատակին»։

Ստալինգրադի հայ պաշտպանների անդրանիկ խիզախներից է Արտաշես Գոմորյանը։ Նրա հրամանատարությամբ գործող տանկը մի քանի ասնյակ հիտլերականներ է ոչնչացրել Ստալինգրադի մատույցներում, սակայն բոլորից ուշագրավն է Գոմորյանի 1942 թ. օգոստոսի 27-ի ժամ օրհասական ժարաը։

«Լենինոո գյուղի շրջանում, 1942 թ. օգոստոսի 27-ին մի օրվա ընթացքում վաշտը երկու անգամ գնաց գրոհի։ Ոնկնելով Քշնամու հակատանկային հրանոթների խաչաձև կրակի տակ, Գոմորյանի տանկի աշտա-

[1] А. С. Чуянов, Большевики города-герои, Сталинград, 1945 г., էջ 46։

բակը ջարգվեց տերմիտային արկով։ Տանկի անձնակազմը շարունակեց կռվել։ Վիրավոր Իսմորյանը շարունակում էր ղեկավարել մարտը։ Երկրորդ տերմիտային արկը գարնվեց տանկի ճակատի մասին, բեկորները խրվեցին հերոսի կուրծքը, դուրս հանեցին թեկնածուական տոմսը, որը մինչև կյանքի վերջը նա կրում էր իր կրծքին։[1]

Դոնի ռազմաճակատի զորամասերում քաջ ռազմիկի համբավ էր վաստակել Օշական գյուղի կոլխոզնիկ գնդացրորդ Խաչիկ Բաղդասարյանը։ Ստալինգրադի մատույցներում ծավալված մարտերից մեկում սերժանտ Բաղդասարյանը ոչնչացրել է 50-ից ավելի հիտլերական։ Գովերգելով այդ փայլուն հաղթանակը, „Героический поход" կարմիրբանակային թերթը դետեղել է քաղաքակ Մարցինկովսկու պոեմը՝ նվիրված գնդացրորդ Բաղդասարյանին։[2]

Մի քանի օր հետո ավագ սերժանտ Խաչիկ Բաղդասարյանի անձնական մարտական հաշվում գրանցված էր արդեն 124 ոչնչացրած հիտլերական։ Այդ առթիվ „Героический поход" թերթը գրում է.

«Ավագ սերժանտ Խաչիկ Բաղդասարյանի անունը քաջ հայանի է յուրաքանչյուր մարտիկի, որպես անվեհեր հերոսներից մեկի, իր գենքի սքանչելի վարպետի։ Միդաթ ռազմիկի ձեռքում գնդացիրը հարվածում է անվրեպ, ոչնչացնելով հիտլերական բանդաներին։ Միայն վերջին երկու մարտի ընթացքում Խաչիկ Բաղդասարյանն իր գնդացրով ոչնչացրել է 74 ֆաշիստ, ընդ որում նրա մարտական հաշիվն աճում է օրեցօր։

Մնալ անհողդողդ, հարվածել թշնամուն անվրեպ, ինչպես Խաչիկ Բաղդասարյանը՝ յուրաքանչյուր գնդացրորդի, յուրաքանչյուր մարտիկի պատվի գործն է։»[3]

Ավելացնելով իր մարտական հաշիվը, ավագ սերժանտ Բաղդասարյանը շուտով հասավ հիանալի արդյունքի։ Դոնի ռազմաճակատի „Красное Знамя" թերթը ռազմաճակատի մարտիկներին ուղղված կոչում գրում է.

«Գնդացրորդ Խաչիկ Բաղդասարյանը ոչնչացրել է 245 գերմանացի։ Փառք և պատիվ սովետական դյուցազնին, կարմիր Բանակի անվեհեր ու հմուտ ռազմիկին, արևավառ Հայաստանի քաջ զավակին։

Գնդացրորդ, ուսումնասիրիր Բաղդասարյանի մարտական փորձը։ Աշխատիր լինել նշանառու կրակի այնպիսի վարպետ, ինչպիսին Բաղդասարյանն է։ Ոչնչացրու, որքան հնարավոր է, ավելի շատ գերմանացի, ինչպես այդ անում է Բաղդասարյանը։

Մարտերում եղիր այնպես կայուն և անվախ, ինչպես արևավառ Հայաստանի զավակ, բոլշևիկ Խաչիկ Բաղդասարյանը։»

Ստալինգրադի մատույցներում կատարած սխրագործությունների համար ավագ սերժանտ Բաղդասարյանը պարգևատրվել է «Կարմիր Դրոշի» շքանշանով։

Ստալինգրադի պաշտպանության հիմնական ծանրությունն իր ուսերի վրա կրել է գեներալ-լեյտենանտ Վ. Ի. Չույկովի 62-րդ բանակը։ Անժամ սխրագործությունների սքանչելի դրվագներ է կերտել Կարմիր Բանակի

[1] Центр. Музей Красной Армии, зал 5-й.
[2] „Героический поход" за 20 окт. 1942 г.
[3] Фронтовая газета „Красное Знамя" за 20 окт. 1942 г.

այդ փառապանծ միավորումը, որի կազմում անդուլ մարտնչել են բազմաթիվ հայ ռազմիկներ։

«Ինձ հաճախ հարցնում են, -ասում է գեներալ Զույկովը, սրվա քնքաքքում թշնամու քանի՞ գրոհներ էին ետ մղում ստալինգրադցիները։ Ասել 10 կամ 15, սխալ կլինի։ Գրոհները հետևում էին միմյանց անդադրում։ Ինքնաթիռների անվերջ հոսանքն ու ռումբերի սոլոցը հաժակել էին օդը։ Թշնամու տանկային արժաղանները անընդհատ գրոհում էին մեր դիրքերի վրա... Թվում էր, թե կյանքն ամբողջովին պետք է խորտակվի կրակի այդ ամենի ծովի, անվերջ ռմբակոծությունների ու գնդակոծությունների տարափի տակ։ Պետք էր գերմարդկային ուժ ու ներվեր ունենալ՝ Վոլգայի աջ ափին պահվելու համար։»

Եվ 62-րդ բանակն անօրինակ տոկունությամբ կանգնեց ու դիմացավ շրջափակման ծանր փորձություններին։

Ստալինգրադի „Баррикады" գործարանը պաշտպանում էր 62-րդ բանակի 70-րդ գվարդիական, հնգակի շքանշանակիր դիվիզիան, որ գործում էր գնդապետ (այժմ գվ. գեներալ-լեյտենանտ) Լյուդնիկովի հրամանատարությամբ։ Գերմանական երկու խոշոր միավորում, արյունահեղ մարտերից հետո, շրջապատում և ընդհուպ Վոլգային են սեղմում գնդապետ Լյուդնիկովի դիվիզիան։ Պարենն ու ռազմամթերքը սպառվել էր, բանակի մյուս զորամասերի հետ կապը կարված էր։ Թշնամին, հրետանա-ականանետային ուժգին կրակ էր վարում սովետական մարտիկների վրա՝ ձգտելով ներխուժել ու ամբողջովին գրավել „Баррикады" գործարանը։ Դիվիզիայի 4500 ռազմիկներից մնացել էին միայն 1200-ը, սակայն լարված մարտերից ու սովից հյուծված արիասիրտ մարտիկները շարունակում էին հերոսաբար կասեցնել թշնամու կատաղի գրոհները և մենամենակ պաշտպանել 400 մետր յայնությամբ փորը, բայց ամուր, դինադաշտը։ Նրանց շարքերում մարաընչում էին քսանից ավելի հայ ռազմիկներ։

Պետաննայա ձորակում բռնկված թեժ մարտերից մեկում շարքից դուրս են գալիս 70-րդ դիվիզիայի գնդերից մեկի հրամանատարն ու կոմիսարը։ Դրությունը դառնում է սպառնալի։ Հակառակորդի տանկերն ու հետևակը, նկատելով գնդում տիրող առժամյա խուճապը, փորձում էին օղակել ապա ջախջախիչ հարված հասցնել հրամանատարությունը կորցրած սովետական զորամասին։ Մարտի այդ վճռական պահին վտանգավոր կացությունը փրկում է դիվիզիայի հատուկ բաժնի ավագ լիազոր կապիտան Աշոտ Իսրսեղյանը՝ իր նախաձեռնությամբ ստանձնելով գնդի հրամանատարությունը։ Իսրսեղյանը համարձակ կերպով նետվում է առաջ, իր հետևից գրոհի տանելով արդեն դոտեպնդված մարտիկներին։ Կասեցնելով հակառակորդի բուզմաթիվ հակագրոհները, սրվա վերջում զորամասը, կապիտան Իսրսեղյանի ղեկավարությամբ, շեշտակի հարվածով դուրս մղեց թշնամուն կարևոր բնագծից։ Այդ մարտում գերմանացիները կորցրին միայն սպանված 700 զինվոր ու սպա։

[1] Героический Сталинград, сборник материалов и документов. Сталинград, 1945 год, стр. 14.

[2] Հայկ. ՍՍՌ ԳԱ Գրականության, Լեզվի և Պատմության Ինստիտուտի Հայբենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ ֆոնդ V, գործ 228, փաստ 3046, էջ 8։

Երբ մարտերը փոխադրվեցին „Баррикады" գործարանի շրջակայքը, կապիտան Բաբսեղյանն անձամբ ղեկավարում էր դիվիզիայի հետախուզությունը, որը յուրաքանչյուր անգամ զուգակցվում էր լարված ընդհարումների հետ։ Մարտերի մեկ օրվա ընթացքում, թշնամու հերթական դրոհը կասեցնելիս, Բաբսեղյանն անձամբ ոչնչացնում է 16 հիտլերական և իր ատակավաթիվ յաջերով արգելում հակառակորդին մոտենալ գործարանին։

Ստալինգրադում կատարած քաջագործությունների համար Երևանի Պոլիտեխնիկ Ինստիտուտի նորավարտ ինժեներ, կապիտան Աշոտ Բաբսեղյանը պարգևատրվում է «Կարմիր Աստղ»-ի շքանշանով, իսկ գեներալ Զույկովի կողմից ստանում է «Մարտական ծառայությունների համար» մեդալ։[1]

Հետախուզության տվյալներով, „Баррикады" գործարանի վարչության շենքի շրջանում ծպտվել էին մոտ 200 գերմանացիներ, որոնք նպատակադրվել էին գիշերն անակնկալ հարձակվել և գրավել գործարանի մուտքը, որը երկար ժամանակ պահում էին մեր մարտիկները։ Դիվիզիայի հրամանատարի առաջադրանքով, սակրավոր լեյտենանտ Տեր-Սիմոնյանը, արհամարհելով ստեղծված վտանգավոր կացությունը, գիշերով պայթեցնում է այն շենքը, ուր դարանակալել էին հիտլերականները։ Շնորհիվ լեյտենանտ Տեր-Սիմոնյանի հաստատակամ ու կտրուկ գործողությունների, շենքի փլատակների տակ իրենց գերեզմանը գտան 100-ից ավելի գերմանացիներ։

Այդ օրերին ամբողջ դիվիզիայում տարածվեց հրանոթի հրամանատար, սերժանտ Վարդանյանի անմահ սխրագործությունը։ Հակառակորդը, մեծ քանակությամբ տանկերով, 80-90 ռմբակոծիչների փոխգործողությամբ, ձգտում էր ներխուժել դիվիզիայի պաշտպանության շրջանը։ Թշնամու դրոհն այնքան ուժգին էր ու մոլեգնած, որ մարտի վերջում հրետանային դիվիզիոնի բոլոր թնդանոթները շարքից դուրս եկան։ Նրանց շուրջն արնաշաղախ ընկած էին մինչև վերջին շունչը արիաբար մարտնչող հրետանավորները։ Մարտապաշտում կենդանի էր մնացել միայն սերժանտ Վարդանյանը։ Նրա դեմքից ու մարմնից հոսում էր արյունը, սակայն քաջասիրտ հրետանավորը, ոչ մի քայլ չնահանջելով, շարունակում էր միայնակ դիմադրել առաջ խլկվող գերմանական տանկերի մոլուցքին։ Այդ ճակատագրական մենամարտում, թշնամու հինգերորդ տանկը խփելիս, սերժանտ Վարդանյանն ընկավ հերոսին վայել մահով։

Հավերժացնելով արիության այդ երևելի կերպարը, ՍՍՀՄ Գերագույն Սովետի նախագահությունը սերժանտ Վարդանյանին պարգևատրեց Լենինի շքանշանով։

1942 թ. հոկտեմբերին գերմանա-ֆաշիստական զորքերի ուժգին հարձակումը Ստալինգրադում հասավ իր գագաթնակետին։ Գերմանական զլխավոր շտաբն արդեն կանխապուշակում էր իր զորքերի անվիճելի տարքանակը Ստալինգրադում։ Գեբբելսյան ռադիոն նույնիսկ ազդարարեց Վոլգայի ամբոցի անկման մասին։ Սեպտեմբերի 30-ին Հիտլերը, ամենայն

[1] ՀՊԳԱ-ի արխիվ, ֆոնդ 111, գործ 465, գեներալ-լեյտենանտ Զույկովի տեղեկությունից։

պարծենկոտությամբ, հայտարարեց, որ «Ստալինգրադի դրավումը հանդիսանում է հսկայական հաջողություն և եթե մենք մի վայր դրավեցինք, ապա այնտեղից անհնար է մեզ շարժելը»[1]

Սակայն գերմանացիների տակտիկական հաջողությունների մեջ թաքնված էր նրանց ստրատեգիական պարտությունը։ Հակառակորդին ոչ միայն չհաջողվեց նվաճել Ստալինգրադը, այլև պաշտպանության երկրորդ ամսին նա Ստալինգրադի տակ կորցրեց միայն սպանված 142.000 զինվոր ու սպա, 1000 ինքնաթիռ և ավելի քան 800 տանկ։

1942 թ. հոկտեմբերի 5-ին Ստալինգրադի ռազմաճակատի հրամանատար գեներալ-գնդապետ Երյոմենկոն ստացավ Գերագույն Գլխավոր հրամանատար ընկեր Ստալինի հրաման-հեռագիրը՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պահանջում եմ, որպեսզի Դուք գործադրեք բոլոր միջոցները Ստալինգրադը պաշտպանելու համար։ Ստալինգրադը չպետք է հանձնվի հակառակորդին»։[2]

Ընկեր Ստալինի այդ պատմական հրամանը հսկայական դեր կատարեց Ստալինգրադի պաշտպանության հետագա ընթացքում։ Առաջնորդի կոչը դարձավ բյուրավոր մարտնչող սրաների հերոսության խորհրդանիշ։ Ռազմիկ-քաղաքի պաշտպաններն իրենց մարտական դրոշների առջև երդվեցին մեծ զորավարին՝ մեռնել, բայց չթողնել թշնամուն ոտնակոխել Ստալինգրադը։

Այդ օրերին հերոս-քաղաքը երկնեց և բազմաթիվ հայ քաջորդիներ։

Շուտով ողջ ռազմաճակատում հռչակվեց երիտասարդ օդաչու, Սովետական Միության ապագա հերոս, ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանի անունը։ Ստալինգրադի մատույցներում Բուռնազյանը 33 անգամ օդային մարտի է բռնվել հակառակորդի հետ և անձամբ ցած գցել թշնամու 11 ինքնաթիռ։

Ավիացիոն կործանիչ գնդի հրամանատարությունը ավագ լեյտենանտ Բուռնազյանին Սովետական Միության հերոսի կոչման ներկայացնելիս, նրա պարգևատրման թերթիկում գրանցել է հետևյալը.

«Ավագ լեյտենանտ Բուռնազյանը համարձակ, անվեհեր օդաչու է։ Գերազանցորեն տիրապետելով օդանավավարական տեխնիկային, բոլոր օդային մարտերում նախաձեռնությունը միշտ վերցրել է իր ձեռքը։ Մարտում պազարյուն է և հաստատակամ։ Բազմաթիվ անգամներ ժամամարտի է բռնվել հակառակորդի գերակշիռ ուժերի հետ՝ միշտ հակադրելով թշնամուն իր կամքը։

Ոչ հակառակորդի ուժերի թվային գերակշռությունը, ոչ էլ ժամվան վտանգը օդային կատաղի մարտերում, երբեք չեն սասանել ընկեր Բուռնազյանին։ Նա միշտ գործել է համարձակ ու հաստատակամ և միշտ հաղթող է դանդիսացել»։[3]

Ստալինգրադի երկնակամարում կատարած սխրագործությունների

[1] А. С. Чумнов- Большевики города-героя. Сталинград, 1945 г., стр. 47.
[2] Նույն տեղ, էջ 78.
[3] Центральный Музеи Красной Армии, зал 5-й, стенд 8-й.
[4] ՀՍՍՀ արխիվ, ֆոնդ 11, գործ 65, փաստաթուղթ 2079, էջ 2—3.

տասար ավագ լեյտենանտ Սերգեյ Ի՛ուոնադյանը պարգեւարվել է «Կարմիր դրոշի» շքանշանով։

Ստալինգրադի մարտերում լայն ծավալ ստացավ սնայպերական շարժումը։ Ահազանգելով 62-րդ բանակի փառաբանված սնայպեր. Սովետական Միության Հերոս, լեյտենանտ Վասիլիյ Զայցևի կոչին. Ստալինգրադի պաշտպան սնայպերները ջանում էին ամենայն օր ավելացնել իրենց մարտական հաշիվը, անվրեպ կրակով ոչնչացնել ավելի շատ հիտլերական։ Անվանի ռուս սնայպերից աշխատում էին ետ մնալ նաև նշանառու կրակի հայ վարպետները։

Այդ առթիվ „Красная Армия" ռազմաճակատային թերթը գրում է. «Ութ օրվա ընթացքում մեր հինգ լավագույն սնայպերները ոչնչացրել են 90 ֆաշիստ։ Սերգեյ Սերովատսկի, Ծոլակ Ալեքսանյան, Իգոր Ֆրոժով, Մուհամմեդ Սաբիրով և Մեխսիլ Շչեգոով — ահա այդ խիզախ հնդյակը։ Նրանք չէին սպասում գերմանացու հայտնվելուն. այլ գտնում էին նրան ու ոչնչացնում։ Եուրաքանչյուր գերմանացու վրա մեր սնայպերները չեն ծախսում մեկ փամփուշտից ավելի։»[1]

«Սնայպեր Գրիգոր Մանուկյանին հաջողվում էր օրվա ընթացքում սպանել 6—7 գերմանացի։»[2] Կապիտան Գոլցեի ստորաբաժանումից սնայպեր Ֆարուգյանը մարտերի մեկ շարաթվա ընթացքում ոչնչացրել է 80 հիտլերական։»[3]

„Тревога" կարմիրբանակային թերթը գրում է.

«Պատրաստվելով Մեծ Հոկտեմբերի 25-րդ տարեդարձին, լեյտենանտ Մուսայելյանի մարտկոցի մարտիկներն ու հրամանատարները պարտավորվեցին՝ յուրաքանչյուր հաշվարկի ցած գցել հակառակորդի առնվազն մեկ ինքնաթիռ։ Այդ պարտավորությունը կատարվեց փայլուն հաջողությամբ։ Լեյտենանտ Մուսայելյանի մարտկոցը Հոկտեմբերյան օրերին ցած է գցել թշնամու տաս գիշատիչ։»[4]

Ստալինգրադի համար մղվող մարտերում քաջ և հմուտ ռազմիկի մարտական հիանալի ունակություններ է ցուցաբերել լեյտենանտ Փուրգեն Ավագյանը։ „Красная Армия" թերթը գետեղելով լեյտենանտ Ավագյանի նկարը, խմբագրական հոդվածում գրում է.

«Ղեկավարելով տանկային վաշտը, լեյտենանտ Ռուրգեն Ավագյանը մեկ օրում ոչնչացրեց հակառակորդի մեկ հրանոթ, շարքից հանեց հակատանկային երեք հաշվարկ և 50-ից ավելի ֆաշիստական դիմադրություն ու սպա Հետևակի հետ միասին Ավագյանը ներխուժեց գերմանական զորամասի հրամանատարական կետը և անձամբ սպանեց երկու սպա՝ վերցնելով նրանցից արժեքավոր փաստաթղթերը։»[5]

Մայոր Դավիթ Ավետիսյանի զորամասին առաջադրված էր, սովետական այլ միավորումների հետ մեկտեղ, պաշտպանել Ստալինգրադի Կիրովյան ռայոնը։ Մարտերն այնտեղ բացառիկ լարված բնույթ էին կրում։ Նոյեմբերի 4-ին գերմանացիները յոթ անգամ գրոհեցին մայոր Ավետիսյանի

[1] „Красная Армия" за 10 ноября 1942 г., № 313.
[2] «Սովետական Հայաստան», 2 փետրվարի 1944 թ.։
[3] „Красная Армия" за 17 ноября 1942 г., № 320.
[4] „Тревога" за 15 ноября 1942 г., № 96.
[5] „Красная Армия" за 19 ноября 1942 г., № 322.

դնդի վրա. սակայն բոլոր դրոհներն էլ ետ մղվեցին թշնամու համար մեծ կորուստներով։ Հակառակորդի 371-րդ գրենադերական դիվիզիան գլխովին ոչնչացվեց այդ օրվա մարտերում։ Նուլնպիսի անփառունակ վախճան ունեցավ նաև գերմանացիների 297-րդ գրենադերական դիվիզիայի կատաղի հարձակումը նոյեմբերի 10-ին, երբ ամեն ինչ բախտախաղի դրած թշնամին ձգտում էր նեղիումել քաղաքի Կիրովյան ոայոնը։ Մայոր Ավետիսյանի զորամասը մեծ կորուստներ կրելով, մինչև վերջին մոկն ու, մարտիկը մեռավ կանգուն իրեն նշված բնակմամբ՝ ոչ մի քայլ չնահանջելով այնտեղից։

Վառ հայրենասիրությունը և անհուն հավատը գալիք հաղթանակի նկատմամբ միշտ ու ամենուրեք թեավորել է Ստալինգրադի պաշտպաններին։ Այդ անմար համոզմունքն է, որ սերժանտ Արամայիս Գոգոսյանին մղել է անմահ սխրագործությունների և Սովետական Միության Հերոս կոչումն նրանից։ Այդ նույն համոզմունքն է, որ ստիպել է սիսիանցի Արգամ Հակոբյանին Ստալինգրադի տակ մենամարտի բռնվել թշնամու տանկերի հետ և նրանցից չորսը ոչնչացնել։ Այդ իսկ հավատով համակված էր և 18-ամյա հայուհի Ասիա Թևկելյանը, որը հակառակորդի մբրկային կրակի տակ նետում էր իրեն մարտադաշտը և այնտեղից դուրս բերելով վիրավոր մարտիկներին՝ նրանց վերքերն ապաքինում։

Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում և հատկապես Ստալինգրադի պաշտպանության օրերին հիշատակարժան դեր է կատարել մեր երկրի խոշորագույն մետալուրգիական գիգանտ, Լենինի շքանշանակիր „Красный Октябрь" գործարանի գլխավոր ինժեներ (այժմ՝ դիրեկտոր) Գարուր Մաթևոսյանը։ Պատերազմի առաջին իսկ օրից մինչև 1942 թ. օգոստոսի 23-ը, երբ գերմանացիները խցկվեցին Ստալինգրադի հյուսիսային արդյունաբերական թաղամասը, „Красный Октябрь"-ը միակ մետալուրգիական գործարանն էր ամբողջ Միության մեջ, որը երկրի ավիացիոն արդյունաբերությունը մերձարկում էր բարձրորակ պողպատ, ավտոտանկային արդյունաբերությանը՝ գնդասանցքակալների և զրահի պողպատ։ Բավական է միայն նշել, որ ամենայն օր „Красный Октябрь"-ից դուրս էր գալիս և Միության ռազմական գործարաններն ուղարկվում 100-150 վագոն առաջնակարգ պողպատ։

Ինչպես հայտնի է, գերմանական հրամանատարության պլաններում գլխավոր հարվածի ուղղությունը Ստալինգրադում անցնում էր այն հատվածով, ուր գտնվում էր „Красный Октябрь"-ը։ Ստալինգրադի և ոչ մի թաղամաս այնպես խիստ չի տուժել պատերազմից, ինչպես Կրասնոգվարդեյսկի ոայոնը։

Մանր ու լարված աշխատանք էր կատարում գործարանի ղեկավարությունը։ Բանվորներից և ինժեներա-տեխնիկական աշխատողներից կազմված աշխարհազորը և կործանիչ գումարտակները արիաբար պաշտպանում էին գործարանի տերիտորիան, մինչև Կարմիր Բանակի գործող զորամասերի մոտենալը։ Մարտերը մղվում էին բառացիորեն ամեն մի ցնխի, պահեստի, մուտքի ու մարտնյան վառարանի համար։

---

[1] «Սովետական Հայաստան», 1 մայիսի 1944 թ.

Այդ օրերին, հակառակորդի ռմբակոծության ժամանակ վիրավորվում և շարքից դուրս է դալիս գործարանի դիրեկտորը։ Պաշտպանության գործի ղեկավարությունը վստահորեն ստանձնում է գործարանի գլխավոր ինժեներ Գարուշը Մաթևոսյանը։

Հայ Կ(բ)Պ Ստալինգրադի մարզկոմի առաջին քարտուղար և Պաշտպանության Քաղաքային Կոմիտեի նախագահ ընկ. Ա. Ս. Զուլյանովի հետ վերջերս ունեցած զրույցի ժամանակ Ստալինգրադի բոլշևիկների ղեկավարը հայտարարեց.

«Հայերն ընդհանրապես դործուն մասնակցություն են ունեցել Ստալինգրադի հերոսական պաշտպանության ընթացքում։ Ես ցանկանում եմ հատկապես նշել քաղաքի պաշտպանության ականավոր դեմքերից մեկին, „Красный Октябрь"-ի դիրեկտոր ընկ. Մաթևոսյանին, որը Ստալինգրադի, ինչպես նաև գործարանի համար սաեղծված տագնապալի օրերին տաժարձակորեն իր վրա վերցրեց ողջ կոլեկտիվի ղեկավարությունը, հստորեն կազմակերպեց մարդկանց, նյութական միջոցների և արժեքավոր մեքենաների էվակուացիան ձախափնյա Վոլգան և Ուրալ, ինքը սակավաթիվ խիզախներով մնաց այրվող ցեխերի շրջակայքում՝ մինչև վերջին հնարավորությունը պաշտպանելով գիգանտ-գործարանը»։

Միայն 1942 թ. հոկտեմբերի 4-ին, մեկ և կես ամիս հսկա մարտընչելուց հետո, երբ գործարանի ամայացած տերիտորիայում էվակուացիան գրեթե լիովին ավարտված էր, Մաթևոսյանը, Սև Մետալուրգիայի մինիստր ընկեր Թևոսյանի կարգադրությամբ, անցավ Վոլգայի ձախ ափը գործարանի պաշտպանությունը հանձնելով 37-րդ դիվիզիային։

Հայրենիքին մատուցած հիշատակարժան ծառայություններ համար ընկեր Գարուշը Մաթևոսյանը պարգևատրվել է Լենինի, «Աշխ. կարմիր Դրոշի» շքանշաններով և «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալով։

Ստալինգրադի Վորոշիլովյան ռայոնի պաշտպանական բնագծերի կառուցման գործը ղեկավարում էր Հիդրոլիզի գործարանի դիրեկտոր ընկ. Նիկողայոս Օհանջանյանցը։ Ամենայն օր, լարված աշխատանքից հետո, գործարանի 8—10 հազար բանվորներ և ռայոնի աշխատավորները կառուցում էին բետոնյա ամրություններ, կրակակետեր, փորում էին հակատանկային խոր փոսեր, խրամատներ և բազմաթիվ արգելակներ, որոնք 15—18 կիլոմետր երկարությամբ գոտևորում էին Ստալինգրադի Վորոշիլովյան ռայոնը։

Պաշտպանական ինտենսիվ շինարարությունը տևեց մինչև օգոստոսի 23-ը, որից հետո սկսվեցին ծանր փողոցամարտեր։ Գարտիայի մարզկոմը ընկ. Օհանջանյանցին հանձնարարեց կազմակերպել Վորոշիլովյան ռայոնի բնակչության և գործարանների նյութական միջոցների էվակուացիան։

Այդ ռուաջադրանքը հաջողությամբ ղեկավարելու համար ընկեր Օհանջանյանցն արժանացավ Պաշտպանության Քաղաքային Կոմիտեի հատուկ շնորհակալությանը և պարգևատրվեց «Ստալինդրադի պաշտպանության համար» մեդալով։[2]

---

1 ՀՊԿ-ի արխիվ. ֆոնդ VII, գործ 142, փաստ. 4315։
2 ՀՊԿ-ի արխիվ, ֆոնդ VI, գործ 156, փաստ. 4320։

* *

1942 թ. նոյեմբերի 7-ին, Սովետական Միության Զինված ուժերի Գերագույն Գլխավոր Հրամանատար ընկեր Ստալինի տոնական հրամանն ի լուր աշխարհի ազդարարեց, որ թշնամին Ստալինգրադի մոտ կանգնեցված է, որ այդ քաղաքի հերոս պաշտպանները «ցուցաբերեցին անձնազոհության, խիզախության, երկաթյա կարգապահության, կայունության և հաղթելու կարողության օրինակներ»[1] Այդ պատմական հրամանում, որպես գալիք հաղթանակի մարգարեական խոսքերը, «հնչեցին Մեծ Առաջնորդի մարգարեական խոսքերը. «հնարու չի այն օրը, երբ թշնամին կիժանա Կարմիր Բանակի նոր հարվածների ուժը։ Մեր փողոցումն էլ առն Կլինի»[2]

Շուտով ողջ աշխարհը համոզվեց Ստալինյան իմաստուն խոսքերի անվիճելի ճշմարտության մեջ։

Գերագույն Գլխավոր Հրամանատարի մշակած հանճարեղ պլանով, բացառիկ լարված ռազմա-ստրատեգիական պայմաններում, 1942 թ. նոյեմբերի 19-ին, Ստալինգրադի մատույցներում դասավորված սովետական զորքերն անցան վճռական հարձակման։ Հարավ-արևմտյան, Դոնի և Ստալինգրադի ռազմաճակատների զորքերը կոարելով թշնամու ուժեղ դիմադրություններ, նոյեմբերի 23-ին, Կալաչի շրջանում փակեցին շրջապատման հրի օղակը գերմանացիների ստալինգրադյան խմբավորման շուրջը։ Հակառակորդի 22 լրիվ սպառազինված դիվիզիաներն ընկան պաշարման մեջ։ Այդ պահից գերմանացիներն անվերադարձ կերպով կորցրին ռազմի նախաձեռնությունը Ստալինգրադում։

Ստրատեգիական փակուղու մեջ ընկած զորքերը փրկելու նպատակով գերմանական հրամանատարությունը Կոտելնիկովոյի շրջանում ստեղծեց ուժեղ հարվածող խմբավորում և դեկտեմբերի 12-ին հարձակման անցավ Ստալինգրադի ուղղությամբ։ Դեկտեմբերի 23-ին Ստալինգրադի ռազմաճակատի զորքերն անցնելով հարձակման՝ իսպառ ջախջախեցին հակառակորդի Կոտելնիկովյան խմբավորումը՝ Ստալինի քաղաքին սպառնացող թշնամու այդ վերջին պատվարը։

1943 թ. հունվարի 10-ին Սովետական Հրամանատարությունն անցավ Ստալինգրադյան ճակատամարտի երրորդ, եզրափակիչ էտապին՝ շրջապատված գերմանական զորքերի լիկվիդացմանը։ Այդ էտապում ևս հիշատակարժան դեր կատարեցին հայ զինվորականները։

Ստալինգրադի վիթխարի ճակատամարտում վճռական դեր կատարեց սովետական հրետանին։ Այդ մեծ էպոպեում իր ամբողջ կարողությամբ դրսևորվեց հրետանու գեներալ՝ լեյտենանտ Իվան Վ.Նեքիլյանի ռազմավարական ապազանը։ Իր բեղմնավոր կյանքի ընթացքում չորս դաժան պատերազմների արհավիրքի բովով անցած գեներալը Ստալինգրադի ռազմաճակատում ղեկավարում էր հրետանու մարշալ Վ.որոնովի հատուկ օպերատիվ խմբավորումը։ Երբ Կարմիր Բանակի զորամասերն անցան գերմանական գեներալ-ֆելդմարշալ ֆոն-Պաուլյուսի շրջապատված 6-րդ բանակի ջախջախմանը, ստալինյան հրետանու հզորությունն ու նրա հրամանատարների վարպետությունը հասավ իր կատարելությանը։ 1943 թ. հունվարի 10-ի

[1] „Правда" за 7 ноября 1942 г.

[2] Նույն տեղում։

լուսաբացին, ամեն տրամաչափի հրետանային ու ականանետային 10.000 փողեր ամեհի ուժով ճայթեցին թշնամու զորքերի ու ամրությունների վրա։ Գեներալ Վ.Վասիլյանը գործելով Դոնի ռազմաճակատի 65-րդ, ապա 25-րդ բանակների կազմում, անբասիր, ստույգ հաշվումներով միանգամայն անթերի կազմակերպեց հրետանային հարձակումը Ստալինգրադի մատույցներում։ Կրակային բոլոր միջոցները սերտ համագործակցության մեջ գնելով հարձակվող սովետական տանկային զորամասերին ու հետևակին, ռազմաճակատի մեկ կիլոմետրի վրա կենտրոնացնելով հրետանային 250 փող, գեներալ Վասիլյանը ստեղծեց կրակային ուժի այնպիսի ինտենսիվություն ու հագեցվածություն, որ թշնամու պաշտպանության առաջին եզրում ամեն ինչ հիմնահատակ խորտակվեց։

Հետագայում, երբ գեներալ Վասիլյանը հարցազրույցներում էր գերված հիտլերականներին, ապա վերջիններիս ի թիվս նրանց նաև բազմաթիվ ճակատամարտերի մասնակցած մոլեռանդ զորավարները, հարկադրված էին դառնության և հիացմունքի միախառնված զգացմունքով խոստովանել սովետական հրետանու տիտանական զորությունը, որ շանթահարեց գերմանական հոծ բանակը Ստալինգրադի շրջանում։

Հրետանու գլխավոր մարշալ Վորոնովը այսպես է բնութագրել գեներալ Վասիլյանին.

«Ընկ. Վասիլյանը հանդիսանում է հիանալի պատրաստված հրետանավոր, կատարելության չափ տիրապետում է ժամանակակից մարտին և հրետանու գործադրման մարտական հիմունքներին։ Բառանդուն, ձեռներեց և հաստատակամ գեներալ է»։[1]

Հրետանու մարշալ Յակովլեը գրում է.

«1942 թ. Ստալինգրադում իր անխոնջ աշխատանքի շնորհիվ ընկ. Վասիլյանը ռազմաճակատի հրետանու ողջ անձնակազմի մեջ վայելում էր մեծ հարգանք ու հեղինակություն»։[2]

1942 թ. նոյեմբերի 19-ին, երբ Ստալինգրադի մատույցներում դասավորված սովետական զորքերն անցան վճռական հարձակման, գնդապետ (այժմ՝ Սովետական Միության Հերոս, գեներալ-մայոր) Ասքանազ Կարապետյանն առաջադրանք ստացավ իր մոտոմեքենայացված բրիգադով ճեղքել թշնամու պաշտպանությունը Պլոդովիտոյի ուղղությամբ, ամբողջ ճակատով դուրս գալ Կալաչ և միանալ Դոնի ռազմաճակատի զորքերին։ Այդ խիստ պատասխանատու խնդրի անթերի կատարմանն անձամբ հետևում էին Ստալինգրադի ռազմաճակատի Ռազմական Խորհրդի անդամ ընկեր Ն. Ս. Խրուշչևը և Սովետական զորակայանի ներկայացուցիչ գեներալ Վասիլևսկին։ Գնդապետ Կարապետյանի բրիգադան սրընթաց գրոհով շարժվեց Ծայա լճի ուղղությամբ և հասնելով գերմանական պաշտպանության ուժեղ ամրացված բնագծին, առանց հապաղելու, խոյացավ թշնամու զորքերի դասավորության մեջ։

Գնդապետ Կարապետյանին հաջողվեց անթերի կատարել հրամանատարության առաջադրանքը, հանդուգն արտելքով ճեղքել գերմանացիների

[1] ՀՊԳԿ-ի արխիվ, Ֆ 2-րդ, գործ 217, փաստաթուղթ 3277։
[2] ՀՊԳԿ-ի արխիվ, նույն տեղում։

ուժեղ պաշտպանությունը և նոյեմբերի 23-ին Կալաչի շրջանում միանալ Դոնի ռազմաճակատի զորքերին։

Զորասարյա համառ մարտերի ընթացքում Կարապետյանի բրիգադն ոչ միայն զգալի կորուստ հասցրեց թշնամուն, այլև Տիգոտնոյի բնակավայրի մոտ շրջապատեց ու գերեց ռումինական առաջին արքայական դիվիզիայի հրետանային գունդը և գերմանական պահեստի մի գումարտակ իրենց լրիվ սպառազինությամբ։

Գերմանացիների պաշտպանությունը ձեղքելու և հրամանատարության առաջադրանքն օրինակելիորեն կատարելու համար Պաշտպանության ժող. կոմիսար ընկեր Ստալինի հրամանով, Կարապետյանի զորամասն արժանացավ Ստալինգրադյան Փվարդիական բրիգադի կոչման։ Մարտերն արիաբար ղեկավարելու համար գնդապետ Ասքանազ Կարապետյանը պարգևատրվեց «Կարմիր Դրոշի» շքանշանով։

Ստալինգրադի վիթխարի ճակատամարտում, ուր պատերազմող երկու կողմերից մասնակցում էին մոտ երկու միլիոն ռազմիկ, ավելի քան հինգ հազար տանկ ու չորս հազար ինքնաթիռ, ժամանակակից մարտի ու զորքերի ռազմավարական ղեկավարումը ամբողջովին կախված էր կապի միջոցների անընդհատ կազմակերպումից։ Հարյուրավոր կիլոմետրներ ձգվող լայնատարած ռազմաճակատում կապի բարդ ու դժվարին գործը ղեկավարողներից մեկն էր նաև Ստալինգրադի ռազմաճակատի Ռազմա օդային Ուժերի կապի պետ գնդապետ Անուշավան Ստեփանյանը։ Այդ օրերին Ստեփանյանի անձնական նախաձեռնությամբ և անմիջական ջանքերով կազմակերպվեց ռադիոյի միջոցով օդային մարտերի ղեկավարման առաջին փորձը, որը շուտով ներդրվեց, ապա և փայլուն արդյունքներ տվեց ողջ Ստալինգրադյան ռազմաճակատում։ Գնդապետ Ստեփանյանի ռադիոկայանները, գանվելով պաշարված Ստալինգրադում, հրամանատարության առաջադրանքները եթերով հասցրնում էին լայնատարած ռազմաճակատի բոլոր հատվածները, ճիշտ ուղղություն ու նպատակակետ տալիս մեր ավիացիոն զորամասերին, ուղղորդում ցամաքային ու օդային ուժերի սերտ համագործակցությունը։

Գնդապետ Ստեփանյանի ղեկավարած կապի զորամասերն իրենց անթերի աշխատանքով հնարավորություն տվին 8-րդ օդային բանակի օդաչուներին Ստալինգրադի շրջանում որսալ ու ցած գցել հակառակորդի 750 ինքնաթիռ։

«Сталинский сокол» թերթի զինթղթակից գրող Նիկոլայ Բոդդանովը իր՝ «Գնդապետ Ստեփանյան» խորագրով գրական ակնարկում գրում է.

«Ստալինգրադում փայլուն հաջողությամբ արդարացրեց իրեն ռադիոյի սոյուզով օդային մարտեր ղեկավարող կայանը, որ կազմակերպել էր գնդապետ Ստեփանյանը։ Ավիացիայի ռադիո-ղեկավարման գործը սովորելու համար մյուս ռազմաճակատներից ու բանակներից Ստեփանյանի կայանն էին գալիս բազմաթիվ հրամանատարներ՝ այդ նշանավոր փորձը կարմիր Բանակի բոլոր զորամասերում ներդրելու նպատակով։»[1]

Ստալինգրադի ճակատամարտում ցուցաբերած նշանակալից ծառայությունների համար գնդապետ Անուշավան Ստեփանյանը պարգևատրվել

[1] ՀՍՍԿ-ի արխիվ, ֆոնդ 1Ա, գործ 88, փաստ. 1799, էջ 2։

է կարմիր դրոշի շքանշանով և «Ստալինգրադի պաշտպանության համար» մեդալով։

Ստալինգրադի պաշտպանության եռուն օրերին ոգեշնչակատում մեծ համբավ էր վայելում փոխգնդապետ Մաքենս Մազաքյանի գվարդիական գորամասը։ Բանակի Իտալական Խորհրդի առաջադրանքով Մազաքյանի գունդը պետք է առաջինը հաղթահարեր ջրային բնագիծը և կռուելով թշնամու դիմադրությունը՝ ներխուժեր Ստալինգրադ։

Այդ լարված մարտի մասին „Коммунист" թերթը գրում է՝

«Գերմանացիների համար դիմադրությունը խորտակված է։ Ամրոցքովին ոչնչացված է թշնամու երկու գունդ, որի է վերցված մոտ 550 գերմանական զինվոր ու ոստ, գրավված է 60 հրանոթ, 60 ավտոմեքենա, պարենով ու ռազմամթերքով բեռնված մի խոշոր գումակ։ Ստալինգրադ մատն փոխգնդապետ Մազաքյանի գվարդիականները։

Այնուհետև սկսվեցին կատաղի փողոցամարտերը քաղաքի յուրաքանչյուր թաղամասի, փողոցի, շենքի ու հարկի համար։ Այդ օրերին 62-րդ բանակի հրամանատար գեներալ Չույկովի նախաձեռնությամբ առաջին անգամ սկիզբ դրվեց գորամասը մասնատելով՝ գրոհի խմբերի կազմակերպմանը, որը փայլուն արդյունքներ տվեց Ստալինգրադի փողոցամարտերում։ Փոխգնդապետ Մազաքյանը մեկն էր այդ ուսանելի մարտական փորձն իր գորամասում ներդրողներից։

1943 թ. հունվարին մեր սատրաբաժանումներից մեկը երբ որ գրոհում էր քաղաքի կենտրոնական մի թաղամաս, սակայն հաջողություն չէր ունենում։ Բանակի հրամանատարությունը այնտեղ ուղարկեց Մազաքյանի գորամասը։ Թշնամին կատաղի վայրագությամբ դիմադրում էր։ Ամենուրեք գրված էին ականներ, թնդանոթային փողեր, գնդացրային կետեր։

«Հանուն Ստալինի քաղաքի» հուժկու բացականչությամբ գրոհի նետվեց Մազաքյանը, իր հետևից տանելով քաջ գվարդիականներին։ Շենքի պատուհանից հակառակորդը մրրկային կրակ բացեց։ գնդակը խոցեց Մազաքյանի ազդրը, սակայն քաջ հրամանատարը շարունակում էր մոլեռանդ գրոհը։ Մինչդին գվարդիականները թաղամասն ամբողջովին մաքրեցին գերմանական հրոսակներից և լարված փողոցամարտերում գարգացրին հարձակումը քաղաքի կենտրոնում։

Ստալինգրադում անվնհեր մարտնչող Մաքենս Մազաքյանը մարտերը հմտորեն ղեկավարելու համար պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Ստալինի քաղաքի համար ծավալված մարտերում փառապանծ մարտական ուղի է անցել Անդրկովկասի քաղաքացիական կոմֆերի հողմերում ծնունդ առած, Կ. Ե. Վորոշիլովի անվան, նախկին 76-րդ հայկական դիվիզիան, որը մեծ մասամբ համալրված էր հայ ռազմիկներից։

1942 թ. նոյեմբերի 19-ին, դանվելով սովետական զորքերի հարվածի գլխավոր ուղղությունում, դիվիզիան հմտորեն ճեղքում է գերմանա-ռումինական զորաղնդերի խոր էշելոնացված, հարատև պաշտպանությունը և գեներալ Զիռայակովի հրամանատարությամբ գործող 21-րդ բանակի կազմում մասնակցում Ստալինգրադի շրջանում օղակված գերմանական զորքերի ոչնչացմանը։

---

[1] „Коммунист" за 25 июня 1943 г.

1943 թ. հունվարի 10-ին դիվիզիան, գեներալ-մայոր Թավարթկիլաձեի հրամանատարությամբ, կոտրում է թշնամու համառ դիմադրությունը Դիմիտրիևկա գյուղի շրջանում և գիշերային գրոհով տիրում գերմանացիների պաշտպանության կարևորագույն հանգույց Կարպովկային։ Հունվարի 21-ի առավոտյան դիվիզիայի զորամասերը ներխուժում են Ստալինգրադ և միանալով գեներալ Զույկովի 62-րդ բանակի զորամասերին՝ մասնակցում հակառակորդի ոչնչացման համար ծավալված փողոցամարտերին։

Դոնի ոլորտում նախաձեռնած մարտական հաջող գործողությունների և 1942 թ. նոյեմբերի 19-ին գերմանացիների պաշտպանությունը հմտորեն ճեղքելու համար, ՍՍՌՄ Պաշտպանության Ժողկոմ ընկեր Ստալինի № 375 հրամանով 76-րդ հայկական գիվիզիան վերակազմվում է 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի։[1]

Ստալինգրադյան մարտերում հարյուրավոր հայ հերոսներ է կերաել կարմիր Բանակի այդ լավագույն միավորումը։ Նրանց անձնվեր պայքարն իր բեղմնավոր դրչով գովերգել է Ստալինգրադի պաշտպանության մասնակից, շնորհալի գրող-մարտիկ Հր. Քոչարը։ Ստալինգրադի մարտերում կատարած քաջագործություններով այդ դիվիզիայից աչքի են ընկել հայ ավարդիականներ «Փառք» շքանշանի երեք աստիճանների ասպետ, անվանի հետախույզ Միքայել Նավասարդյանը, նշանաւոր կրակի վարպետ Արտեմ Քոչարյանը, Ստալինգրադի տակ 31 գերմանացի գերող Երվանդ Ալխտնյանը, մարտերից մեկում չորս տանկ ոչնչացնող ականաձիգ Արգամ Հակոբյանը, անվախ կապավոր Կավկազ Թադևոսյանը, Ծարիցինի պաշտպանության մասնակից Մելիք Մինասյանը, հարյուրավոր մարտիկների կյանք փրկող բժիշկ Պարթև Սմբատյանը, ջութակահար Հակոբ Ատնջյանը և բազմաթիվ հայ քաջորդիներ, որոնք պաշտպանելով Ստալինգրադը՝ պաշտպանում էին իրենց նվիրական Հայաստանի դարերից ի վեր բաղձալի աղատությունը։

1943 թ. փետրվարի 2-ին, գեներալ-գնդապետ Կ. Կ. Ռոկոսսովսկու հրամանատարությամբ գործող Դոնի ռազմաճակատի զորքերի տիտանական հարվածների ուժով Ստալինգրադի տակ կաշկանդված գերմանական 330 հազարանոց բանակը գլխովին ջախջախվեց և հարկադրված եղավ դադարեցնել ապարդյուն դիմադրությունը։ Հրգեհների փայլուն հրացոլքով լուսավառված Վոլգայի ափերին իրենց անփառունակ վախճանը գտան 147 հազար գերմանական հրոսակներ։ 110 հազար ռազմամոլ հիտլերականներ, իրենց 25 գեներալների և ախրահոչակ մեկօրյա ֆելդմարշալ ֆոն-Պաուլյուսի առաջնորդությամբ, հանձնվեցին հաղթող Կարմիր Բանակի ողորմածությանը։

Այսպիսի հավերժական փառքով պսակվեց Ստալինգրադի աշխարհահռչակ ճակատամարտը ստալինյան ռազմական արվեստի անժամ ստեղծագործությունը։

Այդ հոյակապ հաղթանակը շրջադարձային կետ հանդիսացավ Հայրենական Մեծ պատերազմի հետագա ընթացքում։ Վիթխարի ժայռի պես կանգնած Ստալինգրադից ձգվեց սովետական զորքերի փայլուն հաղ-

---

[1] ՀՍԳԿ-ի արխիվ, ֆոնդ VII, գործ 3-րդ, փաստ. 3864, էջ 13։

թանակների և գերմանական բանակների ողբալի պարտությունների անընդմեջ շղթան.

«Ստալինգրադը, ասում է ընկեր Ստալինը, գերմանա-ֆաշիստական բանակի մայրամուտն էր. Ստալինգրադյան ջարդից հետո, ինչպես հայտնի է, գերմանացիներն այլևս չկարողացան ուշքի գալ».

Ստալինգրադի հռչակավոր ճակատամարտը հանդիսացավ այն մեծ դարբնոցը, որի բոցերում ծնունդ առան բյուրավոր հերոսներ ու հաղթական զորագնդեր, կոփվեց պողպատակուռ Ստալինյան Գվարդիան, ավելի ամրացավ Սովետական Միության բոլոր ժողովուրդների անխախտ միասնությունը. Դա ստալինյան հանճարեղ ստրատեգիայի կատարյալ արիումֆն էր.

Զափաղանց բերկրալի է այն հպարտ զգացմունքը, որ Ստալինգրադի վեհապանծ հաղթանակը դարբնող ռուս մեծ ժողովրդի հետ մեկտեղ մարտընչել ու իրենց հավետ ծառայությունն են մատուցել նաև հայ քաջարդիները, որոնց պանծալի գործերը կգեղեցվեն Ստալինի քաղաքի պաշտպանության անմահ տարեգրության մեջ.